



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2006թ. մայիսին /վերլուծություն/

2006թ. մայիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 10653 գործարքներ, որոնց քանակը 2006թ. ապրիլի և 2005թ. մայիսի համեմատ աճել է համապատասխանաբար 10.9%-ով և 12.3%-ով:

2006թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4544 օտարման գործարքների 86.9%-ը կազմել են առուվաճառքները, 12.3%-ը՝ նվիրատվությունները և

0.8%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 38.4%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 36.8%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2006թ. մայիսին անշարժ գույքի օտարման գործարքների քանակը 2006թ. ապրիլի համեմատ աճել է 14.7%-ով, իսկ 2005թ. մայիսի համեմատ՝ 29.0%-ով:

2006թ. մայիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 63.0%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2006թ. ապրիլի համեմատ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 19.1%-ով, իսկ 2005թ. մայիսի համեմատ՝ 3.4%-ով:

2006թ. մայիսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

/1ԱՄՆ դոլարը 2006թ. մայիսին համարժեք է 440.4դրամին/

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. մայիսին /ՀՀ դրամ/	Միջին գները /ՀՀ դրամ/		
		մայիս 2005թ.	մայիս 2006թ.	ապրիլ 2006թ.
Կենտրոն	157500.0-540100.0	269300.0	368100.0	366100.0
Արաբկիր	112500.0-405100.0	229200.0	291200.0	289800.0
Քանաքեռ-Զեյթուն	90000.0-270100.0	139700.0	175500.0	175100.0
Նոր-Նորք	90000.0-225100.0	129000.0	164900.0	164000.0
Ավան	99000.0-180000.0	120000.0	146600.0	146000.0
Էրեբունի	90000.0-225100.0	112800.0	144700.0	144100.0
Շենգավիթ	90000.0-202500.0	135100.0	173400.0	173400.0
Դավթաշեն	90000.0-225100.0	139200.0	180900.0	179800.0
Աջափնյակ	90000.0-225100.0	134300.0	164600.0	164100.0
Մալաթիա-Սեբաստիա	90000.0-202500.0	130700.0	161500.0	161400.0
Նուբարաշեն	58500.0-135000.0	62300.0	105700.0	103700.0
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	58500.0-540100.0	145600.0	188800.0	188000.0

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. մայիսին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների էական փոփոխություններ չեն գրանցվել:

2006թ. մայիսին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 460 բնակարաններ, որոնց քանակը 2006թ. ապրիլի համեմատ աճել է 11.4%-ով, իսկ 2005թ. մայիսի համեմատ՝ 22.0%-ով:

2006թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. մայիսին /ՀՀ դրամ/	Միջին գները /ՀՀ դրամ/		
			մայիս 2005թ.	մայիս 2006թ.	ապրիլ 2006թ.

Արագածոտն	Աշտարակ	36000.0-72000.0	43800.0	60200.0	59900.0
	Ապարան	13500.0-31500.0	20000.0	25900.0	25100.0
	Թալին	11300.0-33800.0	20000.0	23200.0	23200.0
Արարատ	Արտաշատ	24800.0-49500.0	34200.0	45400.0	44400.0
	Մասիս	36000.0-67500.0	39800.0	53900.0	54000.0
	Վեդի	22500.0-45000.0	20300.0	37200.0	37500.0
	Արարատ	20300.0-45000.0	25900.0	39400.0	39300.0
Արմավիր	Վաղարշապատ	49500.0-94500.0	68300.0	78700.0	78700.0
	Արմավիր	27000.0-58500.0	39800.0	52400.0	50200.0
	Մեծամոր	18000.0-36000.0	21800.0	33500.0	33700.0
Գեղարքունիք	Սևան	18000.0-40500.0	22700.0	32600.0	33200.0
	Գավառ	13500.0-33800.0	18600.0	24800.0	24900.0
	Մարտունի	22500.0-67500.0	22300.0	38600.0	38400.0
	Վարդենիս	9000.0-29300.0	10900.0	20300.0	19800.0
	Ճամբարակ	5900.0-20300.0	9000.0	13200.0	13500.0
Լոռի	Վանաձոր	27000.0-49500.0	35600.0	47000.0	47400.0
	Ստեփանավան	15800.0-29300.0	20800.0	24100.0	24200.0
	Սյիտակ	18000.0-45000.0	22500.0	32700.0	32800.0
	Այվերդի	9000.0-29300.0	15900.0	20400.0	20400.0
	Տաշիր	11300.0-24800.0	18700.0	19400.0	19800.0
	Թումանյան	4100.0-11300.0	5000.0	5100.0	5200.0
	Շամլուղ	2300.0-8300.0	2700.0	2700.0	2700.0
	Ախթալա	6800.0-16000.0	10100.0	10100.0	10300.0
Կոտայք	Արովյան	45000.0-92300.0	66300.0	89000.0	88900.0
	Նոր Հաճն	40500.0-65300.0	44700.0	60100.0	60400.0
	Բյուրեղավան	22500.0-51800.0	32000.0	42600.0	42100.0
	Եղվարդ	31500.0-58500.0	39300.0	55600.0	55300.0
	Հրազդան	20300.0-40500.0	26800.0	34700.0	34500.0
	Ծաղկաձոր	18000.0-81000.0	51000.0	70500.0	70500.0
	Չարենցավան	24800.0-45000.0	28600.0	38900.0	38400.0
Շիրակ	Գյումրի	27000.0-58500.0	38600.0	46300.0	47300.0
	Արթիկ	15800.0-33800.0	19800.0	29700.0	30300.0
	Մարալիկ	8100.0-31500.0	15700.0	21100.0	21600.0
Սյունիք	Գորիս	20300.0-58500.0	34100.0	51700.0	50500.0
	Կապան	22500.0-45000.0	25800.0	39500.0	38600.0
	Սիսիան	18000.0-40500.0	23300.0	32400.0	31600.0
	Մեղրի	13500.0-33800.0	19100.0	26400.0	25300.0
	Ագարակ	9000.0-27000.0	16100.0	19500.0	19000.0
	Քաջարան	9000.0-31500.0	12200.0	24400.0	22600.0
	Դաստակերտ	4500.0-11300.0	6300.0	6200.0	6300.0
Վայոց Ձոր	Վայք	13500.0-38300.0	23100.0	33700.0	32900.0
	Եղեգնաձոր	24800.0-58500.0	34900.0	52200.0	51400.0
	Ջերմուկ	36000.0-81000.0	37400.0	59600.0	58600.0
Տավուշ	Դիլիջան	18000.0-49500.0	28700.0	41500.0	39900.0
	Իջևան	27000.0-72000.0	32500.0	49100.0	48300.0
	Բերդ	18000.0-45000.0	24300.0	29700.0	29000.0
	Նոյեմբերյան	9000.0-22500.0	12400.0	16100.0	15500.0

2006թ. մայիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների էական փոփոխություններ չեն գրանցվել:

2006թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 458 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 97, մյուս

մարզերում միասին վերցրած՝ 361: 2006թ. ապրիլի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 10.9%-ով, ընդ որում Երևանում նվազել՝ 19.2%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 23.2%-ով: 2005թ. մայիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 27.2%-ով, ընդ որում Երևանում՝ 24.4%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 28.0%-ով:

2006թ. մայիսին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. մայիսին /ՀՀ դրամ/	Միջին գները /ՀՀ դրամ/		
		մայիս 2005թ.	մայիս 2006թ.	ապրիլ 2006թ.
Գենտրոն	135000.0-900200.0	297800.0	383300.0	382500.0
Արաբկիր	90000.0-450100.0	239100.0	296300.0	296800.0
Քանաքեռ-Զեյթուն	67500.0-270100.0	142800.0	178900.0	178700.0
Նորք-Մարաշ	90000.0-450100.0	170100.0	185000.0	186500.0
Ավան	90000.0-360100.0	122900.0	148800.0	149200.0
Էրեբունի	67500.0-225100.0	115900.0	147500.0	146800.0
Շենգավիթ	67500.0-202500.0	138500.0	175200.0	177100.0
Դավթաշեն	90000.0-405100.0	144600.0	183300.0	182500.0
Աջափնյակ	67500.0-270100.0	138600.0	167000.0	166900.0
Մալաթիա-Սեբաստիա	67500.0-405100.0	135400.0	164400.0	164300.0
Նուբարաշեն	40500.0-135000.0	66200.0	106700.0	106100.0
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	40500.0-900200.0	155600.0	194200.0	194300.0

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. մայիսին անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների /ներառյալ տնամերձի միավորի գինը/ էական էական փոփոխություններ չեն գրանցվել:

2006թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/ և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. մայիսին /ՀՀ դրամ/	Միջին գները /ՀՀ դրամ/		
			մայիս 2005թ.	մայիս 2006թ.	ապրիլ 2006թ.
Արագածոտն	Աշտարակ	27000.0-81000.0	46200.0	64200.0	63800.0
	Ապարան	13500.0-36000.0	21100.0	27300.0	26100.0
	Թալին	13500.0-36000.0	21000.0	24500.0	24600.0
Արարատ	Արտաշատ	22500.0-58500.0	35300.0	46600.0	45600.0
	Մասիս	25000.0-58500.0	40900.0	55000.0	55200.0
	Վեդի	22500.0-45000.0	22600.0	38500.0	38700.0
	Արարատ	22500.0-45000.1	27000.0	40700.0	40300.0
Արմավիր	Վաղարշապատ	36000.0-99000.0	69300.0	80000.0	80000.0

	Արմավիր	22500.0-67500.0	40700.0	53900.0	51300.0
Գեղարքունիք	Սևան	18000.0-49500.0	23600.0	37300.0	38000.0
	Գավառ	9000.0-36000.0	19600.0	26100.0	26200.0
	Մարտունի	13500.0-45000.0	23400.0	39800.0	39400.0
	Վարդենիս	9000.0-31500.0	12300.0	21700.0	21400.0
	Ճամբարակ	4500.0-22500.0	10800.0	14600.0	14900.0
Լոռի	Վանաձոր	22500.0-54000.0	37200.0	48300.0	49100.0
	Ստեփանավան	13500.0-36000.0	26100.0	26200.0	26700.0
	Սպիտակ	13500.0-36000.0	23400.0	34000.0	34100.0
	Ալավերդի	9000.0-31500.0	16800.0	21900.0	21700.0
	Տաշիր	9000.0-31500.0	20000.0	20900.0	21300.0
	Թումանյան	4500.0-18000.0	6300.0	6700.0	6800.0
	Շամլուղ	2300.0-13500.0	4000.0	4200.0	4300.0
	Ախթալա	9000.0-22500.0	10800.0	11600.0	11900.0
Կոտայք	Արուսյան	31500.0-99000.0	67400.0	91000.0	90300.0
	Նոր Հաճն	18000.0-76500.0	45700.0	61300.0	61300.0
	Բյուրեղավան	18000.0-45000.0	33100.0	43800.0	43300.0
	Եղվարդ	22500.0-63000.0	40200.0	56700.0	56400.0
	Հրազդան	18000.0-40500.0	28000.0	36200.0	35900.0
	Ծաղկաձոր	36000.0-112500.0	54400.0	72200.0	71700.0
	Չարենցավան	18000.0-45000.0	30000.0	39900.0	39400.0
Շիրակ	Գյումրի	27000.0-67500.0	42600.0	47900.0	48900.0
	Արթիկ	9000.0-40500.0	20700.0	30800.0	31400.0
	Մարալիկ	13500.0-36000.0	16600.0	22900.0	23400.0
Սյունիք	Գորիս	18000.0-58500.0	35200.0	52900.0	51500.0
	Կապան	13500.0-45000.0	26900.0	40600.0	39600.0
	Սիսիան	13500.0-40500.0	24200.0	33500.0	32900.0
	Մեղրի	13500.0-36000.0	20100.0	27500.0	27000.0
	Ագարակ	9000.0-36000.0	17000.0	21000.0	21000.0
	Դաստակերտ	4500.0-18000.0	7400.0	8500.0	8600.0
Վայոց Ձոր	Վայք	13500.0-40500.0	24000.0	35000.0	34000.0
	Եղեգնաձոր	18000.0-63000.0	35900.0	54000.0	52400.0
	Ջերմուկ	13500.0-40500.0	27400.0	35700.0	35400.0
Տավուշ	Դիլիջան	18000.0-58500.0	32500.0	42500.0	40900.0
	Իջևան	18000.0-58500.1	33600.0	50400.0	49500.0
	Բերդ	13500.0-40500.0	25000.0	31100.0	30600.0
	Նոյեմբերյան	9000.0-31500.0	13800.0	17100.0	16800.0

2006թ. մայիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության, 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների /ներառյալ տնամերձի միավորի գինը/ էական փոփոխություններ չեն գրանցվել:

Ընդհանուր առմամբ, 2006թ. մայիսին հանրապետությունում օտարվել է 3154.13 հա /այդ թվում՝ 15.72 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 3062.17 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում 3086.56 հա /այդ թվում՝ 14.46 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 3001.62 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 56.92 հա /այդ թվում՝ 1.15 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 50.25 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 10.66 հա /այդ թվում՝ 0.10 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են փոխանակության գործարքներ, որից 10.30 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Հողերի առուվաճառքների առավել մեծ մակերեսներ արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 2284.17 հա, որից 2276.58 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Ստորև ներկայացվում է 2006թ. մայիսին մարզերում հողերի առուվաճառքի քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն արդյունաբերական օբյեկտների, հատուկ պահպանվող տարածքների և ջրային հողերը.

ԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			Բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	25	1.92	25	1.74	0	0.00	85	6.04	19	4.77
Արագածոտն	51	87.31	7	0.87	8	0.62	55	55.30	61	5.84	2	0.02
Արարատ	49	131.90	20	1.72	26	0.88	103	153.01	74	6.69	6	0.06
Արմավիր	45	400.39	3	0.30	39	0.69	158	1876.19	75	6.44	7	0.16
Գեղարքունիք	0	0.00	4	0.28	14	0.83	14	21.32	10	1.44	2	1.55
Լոռի	0	0.00	0	0.00	5	0.01	7	12.44	7	1.26	6	0.15
Կոտայք	36	124.95	6	0.97	11	0.20	128	59.95	162	17.90	5	1.42
Շիրակ	2	0.20	22	0.86	35	0.85	17	22.08	3	0.97	0	0.00
Սյունիք	0	0.00	2	0.24	12	0.33	9	6.44	0	0.00	2	0.03
Վայոց Ձոր	1	2.00	0	0.00	16	0.27	10	6.25	4	0.54	0	0.00
Տավուշ	6	29.43	0	0.00	1	0.30	34	12.49	12	0.96	1	0.06
Ընդամենը	190	776.18	89	7.16	192	6.72	535	2225.47	493	48.08	50	8.22

2006թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են 1560 միավոր հողերի առուվաճառքի գործարքներ /2005թ. մայիսին՝ 1067/ այդ թվում 725-ը՝ գյուղատնտեսական նշանակության /539/, 824-ը՝ բնակավայրերի /523/, 8-ը՝ արդյունաբերական օբյեկտների /4/, 1-ը՝ հատուկ պահպանվող տարածքների /1/, 2-ը՝ ջրային հողեր:

2006թ. մայիսին հողերի առուվաճառքներից 400 միավորը իրականացվել են աճուրդների միջոցով /2005թ. մայիսին՝ 158/, այդ թվում 3-ը՝ /0.38 հա/ Երևանում /11/, իսկ 397-ը՝ /797.14 հա/ մյուս մարզերում /147/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 188 միավորը /773.54 հա/ հանդիսացել է գյուղատնտեսական /2005թ. մայիսին՝ 80/, 65-ը՝ /5.29 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /45/, 139-ը՝ /3.97 հա/ հասարակական կառուցապատման /30/, 5-ը՝ /1.22 հա/ արդյունաբերական օբյեկտների /3/, 1-ը՝ /2.50 հա/ հատուկ պահպանվող տարածքների, 2-ը՝ /11.00 հա/ ջրային հողեր:

2006թ. մայիսին, հանրապետությունում արձանագրված 725 միավոր գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքներից 188-ը իրականացվել են աճուրդների, 9-ը՝ դատարանի վճիռների և 2-ը՝ ուղղակի վաճառքների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	48	65.11	4.4	850.0	193.8	35	32.00	352.3	6606.0	2180.0
Ապարան								88.1	748.7	303.9
Թալին	3	22.20	41.8	825.8	323.7	18	20.17	88.1	739.9	303.9
Ծաղկահովիտ						1	3.00	74.9	924.8	132.1
Արարատի մարզ										
Արտաշատ	13	8.26	797.1	3333.8	2030.2	61	138.58	325.9	5284.8	1145.0
Մասիս	20	106.52	11.0	1034.9	323.7	18	4.66	176.2	6606.0	1523.8
Վեդի	15	16.48	28.6	127.7	72.7	22	8.89	198.2	4404.0	933.6
Արմավիրի մարզ										
Արմավիր	30	264.06	37.4	1550.2	178.4	17	31.17	286.3	3963.6	739.9
Բաղրամյան	11	130.72	35.2	35.2	35.2	66	1610.09	88.1	660.6	466.8
Վաղարշապատ	4	5.61	35.2	836.8	237.8	72	233.99	431.6	8808.0	1281.6
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						3	0.96	185.0	484.4	308.3
Ճամբարակ						5	3.00	44.0	528.5	132.1
Մարտունի								44.0	1761.6	436.0
Սևան								44.0	440.4	169.6
Վարդենիս						6	17.36	26.4	519.7	193.8
Լոռու մարզ										
Այվերդի						3	9.70	158.5	2422.2	334.7
Գուգարք						4	2.74	220.2	2642.4	845.6
Սպիտակ								220.2	1453.3	458.0
Ստեփանավան								88.1	2202.0	312.7
Տաշիր								44.0	440.4	180.6
Կոտայքի մարզ										
Աբովյան	18	43.30	52.8	836.8	312.7	53	11.11	264.2	11010.0	2853.8
Եղվարդ	7	13.69	48.4	709.0	508.7	66	44.40	167.4	11010.0	1981.8
Հրազդան	11	67.95	59.5	581.3	303.9	6	3.35	110.1	2642.4	693.6
Շիրակի մարզ										
Ախուրյան						2	4.92	242.2	1651.5	367.7
Ամասիա						1	0.29	35.2	231.2	96.9
Անի						5	4.23	105.7	352.3	193.8
Աշոցք						8	12.48	44.0	110.1	101.3
Արթիկ	2	0.20	832.4	832.4	832.4	1	0.16	61.7	1057.0	154.1
Սյունիքի մարզ										
Գորիս						2	0.97	88.1	704.6	277.5
Կապան								52.8	880.8	202.6
Մեղրի						4	0.68	176.2	1867.3	400.8
Սիսիան						3	4.79	44.0	660.6	154.1
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						8	4.97	114.5	2642.4	1140.6
Վայք						2	1.27	52.8	1497.4	449.2
Տավուշի մարզ										
Բերդ						2	0.24	44.0	880.8	299.5

Իջևան								233.4	1761.6	726.7
Նոյեմբերյան	6	29.43	207.0	361.1	233.4	32	12.25	44.0	3672.9	431.6

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2006թ. մայիսին, հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրված 472 միավոր բնակելի կառուցապատման հողերի առուվաճառքներից 62-ը իրականացվել են աճուրդների, 3-ը՝ դատարանի վճիռների և 2-ը՝ ուղղակի վաճառքների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	6	6729.0	74.9	211.4	149.7	58	54722.0	110.1	3523.2	1867.3
Ապարան								110.1	616.6	154.1
Թալին	1	1934.0	116.7	116.7	116.7	1	2850.0	44.0	352.3	66.1
Ծաղկահովիտ						1	30.0	44.0	352.3	61.7
Արարատի մարզ										
Արտաշատ	15	15000.0	149.7	427.2	312.7	18	19920.0	132.1	2642.4	687.0
Մապիս	5	2207.0	193.8	447.0	389.8	44	35980.0	132.1	8808.0	900.6
Վեդի						12	11010.0	110.1	968.9	502.1
Արմավիրի մարզ										
Արմավիր						23	22931.0	132.1	2202.0	880.8
Բարրամյան								79.3	264.2	110.1
Վաղարշապատ	3	3000.0	632.0	632.0	632.0	51	40952.0	132.1	4404.0	1167.1
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	4	2800.0	90.3	96.9	92.5	3	2856.0	132.1	880.8	295.1
Ճամբարակ								44.0	132.1	70.5
Մարտունի						3	2965.0	88.1	440.4	176.2
Սևան								88.1	880.8	114.5
Վարդենիս						4	8593.0	44.0	220.2	83.7
Լոռու մարզ										
Ալավերդի						1	2730.0	66.1	264.2	96.9
Գուգարք						4	5101.0	66.1	2290.1	480.0
Սպիտակ								61.7	440.4	96.9
Ստեփանավան						2	4800.0	44.0	264.2	79.3
Տաշիր								44.0	132.1	59.5
Կոտայքի մարզ										
Աբովյան	2	2200.0	407.4	660.6	535.1	80	94088.0	132.1	6606.0	1404.9
Եղվարդ	3	4734.0	680.4	1620.7	995.3	70	69885.0	132.1	6606.0	1594.2
Հրազդան						11	13710.0	132.1	8808.0	995.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	11	3069.0	568.1	1904.7	1415.9			110.1	1497.4	110.1

Ամսափա								44.0	132.1	44.0
Անի						1	1330.0	66.1	176.2	66.1
Աշոցք						1	5370.0	39.6	132.1	39.6
Արթիկ	10	5070.0	66.1	369.9	138.7	1	3000.0	66.1	902.8	66.1
Սյունիքի մարզ										
Գորիս								66.1	528.5	198.2
Կապան	2	2400.0	805.9	1666.9	1235.3			66.1	616.6	180.6
Մեղրի								66.1	396.4	105.7
Միսիան								66.1	396.4	114.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						4	5360.0	66.1	1101.0	224.6
Վայք								74.9	616.6	99.1
Տավուշի մարզ										
Բերդ						1	1320.0	44.0	616.6	74.9
Իջևան						10	8107.0	66.1	1321.2	325.9
Նոյեմբերյան						1	125.0	44.0	616.6	96.9

2006թ. մայիսին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 7 գործարքներ 2.93 հա մակերեսով, ընդ որում 4-ը՝ Արարատի /0.40 հա/, 1-ը՝ Լոռու /0.06 հա/ և 2-ը՝ Շիրակի /2.48 հա/ մարզերում:

2006թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 747 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.0%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 30.8%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2006թ. ապրիլի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 2.2%-ով, իսկ 2005թ. մայիսի համեմատ՝ 37.1%-ով:

2006թ. մայիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 73 բնակարանների, 24 անհատական բնակելի տների, 247 հասարակական, 47 արտադրական նշանակության օբյեկտների, 354 միավոր հողերի, 2 ավտոտնակների վարձակալության գործարքներ:

2006թ. մայիսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 12 վարձակալության գործարքների քանակը 2006թ. ապրիլի համեմատ նվազել է 40.0%-ով, իսկ 2005թ. մայիսի համեմատ՝ 20.0%-ով:

2006թ. մայիսին հանրապետությունում վարձակալվել են 3959.91 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 4.55 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 3936.63 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 4.52 հա բնակավայրերի, 8.55 հա արդյունաբերական օբյեկտների, 5.31 հա հատուկ պահպանվող տարածքների, 0.35 հա ջրային հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արագածոտնի մարզում՝ 1199.93 հա, որից 1197.40 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր մակերեսով՝ 33.33 հա, որից 33.00 հա գյուղատնտեսական նշանակության, Տավուշի մարզում:

Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 2516.15 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2006թ. մայիսին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	10	1107.00	56	90.40
Արարատ	2	20.00	9	166.33
Արմավիր	0	0.00	5	443.86
Գեղարքունիք	10	56.30	29	86.42
Լոռի	1	600.00	41	108.25
Կոտայք	4	598.00	2	105.00
Շիրակ	3	111.00	51	105.03
Սյունիք	0	0.00	48	140.92
Վայոց Ձոր	6	23.85	15	141.28
Տավուշ	0	0.00	9	33.00
Ընդամենը	36	2516.15	265	1420.49

2006թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1253 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 11.8%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. ապրիլի համեմատ աճել է 24.7%-ով, իսկ 2005թ. մայիսի համեմատ՝ 48.6%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /48.5%/, առանձնատների /18.4%/, հասարակական նշանակության օբյեկտների /14.8%/ և հողերի /12.3%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 642 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. ապրիլի համեմատ աճել է 16.9%-ով, իսկ 2005թ. մայիսի համեմատ՝ 54.3%-ով:

2006թ. մայիսին հանրապետությունում գրավադրվել են 573.58 հա /այդ թվում 4.18 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 561.61 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում 360.74 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր՝ 0.07 հա բնակավայրերի հողեր, Շիրակի մարզում :

2006թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար, 10 և 13 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.2%: 2006թ. ապրիլի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 71.3%-ով, իսկ 2005թ. մայիսի համեմատ աճել՝ 35.3%-ով: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափերն արձանագրվել են Արարատի մարզում՝ 60.9%:

2006թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1853 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2006թ. ապրիլի համեմատ աճել է 10.2%-ով, իսկ 2005թ. մայիսի համեմատ՝ 12.8%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 17.4%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /46.5%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն